Հավելված
ՀՀ կառավարության 2011 թ.
հուլիսի 21-ի նիստի N 28
արձանագրային որոշման

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

ԿԵՆՍԱՉԱՓԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՆՁՆԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան “___” _____ 2011թ.

«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ, ի դեմս կազմակերպության տնօրեն Ա. Ղուլյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետ Ն.Մուրադխանյանի, այսուհետև՝ միասին «Պատվիրատու», մի կողմից, և ՊՎՊՎ ԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրենների խորհրդի նախագահ Կ. Զարնոտալի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Կապալառու», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կապալառուն՝ ստանձնում անձամբ կատարել պայմանագրի 1.2 կետով սահմանված աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրա դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Կապալառուն պարտավոր է բացառապես իր միջոցներով և նյութերով կատարել 1.2.1-1.2.7 կետերով սահմանված աշխատանքներն ու մատակարարումները (այսուհետ՝ միասին կարող են անվանվել նաև Աշխատանք), բացառությամբ պայմանագրի 2.3.4 կետով սահմանված դեպքի:

1.2.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ կապալառուն ստանձնում է “Կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի համակարգի ներդրման” (այսուհետ՝ համակարգ) աշխատանքների կատարման պարտավորությունը համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածի և սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի: Ընդ որում համակարգի տեղադրման վայր է հանդիսանալու Պատվիրատուի կողմից նախապես ընտրված կոնկրետ վայրը:

1.2.2 Համակարգի շահագործման ընթացքում իրականացնել դրա սպասարկման ծառայությունները և ապահովել համակարգի անխափան աշխատանքը համաձայն սույն պայմանագրի N 1 հավելվածի՝ մինչև սույն պայմանագրի գործողության ժամկետի ավարտը.

1.2.3 Պատվիրատուի կողմից ներկայացված աշխատողներին ուսուցանել համակարգի հետ աշխատելուն և իրականացնել նրանց ընթացիկ վերապատրաստում, որի նկարագրությունը սահմանված է պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով.

1.2.4 Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծել և Պատվիրատուի կողմից նախապես ընտրված կոնկրետ վայրում Պատվիրատուին հանձնել կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի բլանկներ և նույնականացման քարտերի ստեղծման համար անհրաժեշտ պլաստիկ քարտեր,(ինչպես նաև դրանց տպագրման համար անհրաժեշտ նյութեր, ներկեր և այլն)՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական պահանջների:

1.2.5 Իրականացնել ոլորտի վերաբերյալ մարկետինգային գործունեություն,

1.2.6 Ստեղծել և հեռուստատեսության, ռադիոյի, ինչպես նաև համացանցի միջոցով տարածել կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի վերաբերյալ գովազդային հոլովակներ՝ կողմերի միջև համաձայնեցված ծավալներով,

1.2.7 Կողմերի փոխադարձ համաձայնությամբ իրականացնել անձնագրերի էքսպրես առաքում, որի վերաբերյալ կկնքվի առանձին համաձայնագիր

1.3 Աշխատանքների կատարման արդյունքը հանդիսանում է Պատվիրատուի սեփականությունը, իսկ Համակարգի ծրագրային ապահովման և նյութերի օգտագործման համար Կապալառուն պատվիրատուին պայմանագրի գործողության ժամկետի համար տրամադրում է լիցենզիա, որը հնարավոր չէ ետ կանչել: Լիցենզիան Պատվիրատուին է տրամադրվում սույն պայմանագրի 1.2. կետով նախատեսված համակարգի ներդրումն իրականացնելու և համակարգը շահագործման հանձնելու հետ միասին: Եթե պայամանգիրը լուծվել է Կապալառուի կողմից Աշխատանքները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու պատճառով, ապա Համակարգի ծրագրային ապահովման և նյութերի օգտագործման համար մշտական և անհետկանչելի լիցենզիան Պատվիրատուին անցնում է Պայմանագրի լուծման պահին: Լիցենզիան ենթակա չէ ենթալիցենզավորման, լիցենզիայի առարկան չպետք է հայտնի դառնա երրորդ անձանց և գործում է միայն Հայաստանի Հանրապետության տարածքում: Սույն պայմանագրով նախատեսված վճարումները պատվիրատուի կողմից ամբողջ ծավալով կատարվելուց հետո, վերջին վճարումը կատարելու պահից լիցենզիան պատվիրատուին անցնում է անժամկետ, մշտական օգտագործման իրավունքով, առանց լրացուցիչ փաստաթուղթ (պայմանագիր, համաձայնագիր և այլն) կնքելու: Լիցենզիայի համար Պատվիրատուն Կապալառուին միանվագ վճարում է 100 Եվրո: Լիցենզիայի մանրամասն նկարագիրը սահմանված է հավելված N1-ով: Համակարգի կրիչի համար (Hardware) Պատվիրատուն կապալառուին միանվագ վճարում է 100

Եվրո: Համակարգի կրիչը հանդիսանում է Պատվիրատուի սեփականությունը, որի նկատմամբ սեփականության իրավունքը ծագում է համակարգի ներդրումն իրականացնելու և համակարգը շահագործման հանձնելու հետ միասին:

1.4Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում մինչև 2017թ-ը: Աշխատանքի կատարման սկիզբն է 2011թ-ը, իսկ վերջնաժամկետը՝ 2017թ-ը:»:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կապալառուի գործունեությանը.

2.1.2 Առանց Աշխատանքի արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուի կողմից մատուցված Աշխատանքնը չի համապատասխանում սույն պայմանագրին և/կամ դրա հավելվածներով սահմանված պահանջներին և/կամ խախտել է Աշխատանքի մատուցման ժամկետը և Աշխատանքնը չի կարող մատուցվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում,

2.1.3. եթե հանձնման ներկայացվել կամ հանձնվել է սույն պայմանագրին կամ դրա հավելվածներին չհամապատասխանող կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի բլանկներ և նույնականացման քարտեր, կապալառուից, իր ընտրությամբ, պահանջել՝

1) համաչափ պակասեցնելու ապրանքի գինը.

2) ողջամիտ ժամկետում անհատույց վերացնելու ապրանքի թերությունները.

3) հատուցելու ապրանքի թերությունները վերացնելու համար իր կրած ծախսերը:

2.1.4. Կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի բլանկների և նույնականացման քարտերի որակին առաջադրվող պահանջների էական խախտումների դեպքում (չվերացվող թերությունների, ինչպես նաև այնպիսի թերությունների, որոնք չեն կարող վերացվել առանց անհամաչափ ծախսերի կամ ժամանակի կորստի, կամ այնպիսիք, որոնք բազմիցս կամ կրկին ի հայտ են գալիս դրանք վերացնելուց հետո, և նման բնույթի այլ թերություններ) Պատվիրատուն իրավունք ունի պահանջել փոխարինելու անպատշաճ որակի ապրանքը՝ պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով կամ լուծել պայմանագիրը:

2.1.5 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին և/կամ պայմանագրով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ Կապալառուին տրամադրելով թերությունների անվճար վերացման 30-օրյա ժամկետ: Եթե սույն կետով սահմանված ժամկետում թերությունները չեն վերացվել, Պատվիրատուն իրավունք ունի պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը

2.1.6 սեփական հայեցողությամբ և միջոցներով վերացնել Աշխատանքի թերությունները և պահանջել դրանց վերացման համար իր կատարած ծախսերը,

2.1.7 առանց կատարված աշխատանքը վարձատրելու, ինչպես նաև վնասները հատուցելու՝ պահանջել լուծելու սույն պայմանագիրը, եթե Կապալառուից ստացած ոչ հավաստի տեղեկատվության հետևանքով կնքվել է այնպիսի աշխատանքի կատարման պայմանագիր, որը չունի Պատվիրատուի նկատի ունեցած հատկությունները կամ Կապալառուի կողմից խախտվել է սույն պայմանագրի 2.4.6 կետը,

2.1.8 Մինչև Աշխատանքի ավարտը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Կապալառուին և հատուցելով մինչև պայմանագրից հրաժարումը կապալառուի կատարած՝ Պատվիրատուի վճարումներով չծածկված ծախսերը՝ պահանջելով իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը,

2.1.9 Պատվիրատուի կողմից սույն կետով սահմանված իր իրավունքներից որևէ մեկից օգտվելն ոչ մի կերպ չի սահմանափակում իրեն պատճառված վնասների հատուցում պահանջելուց:

2.1.10 Ցանկացած պահի իրականացնել Աշխատանքի տեխնիկական աուդիտ,

2.1.11 սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված Կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի բլանկների և նույնականացման պլաստիկ քարտերի տվյալ տարվա համար նախատեսված չափաքանակից ավել չափաքանակ պատվիրել՝ երեք ամիս առաջ ծանուցելով Կապալառուին: Ավել պատվիրված մասին համապատասխան կատարվում է նվազեցում N 2 հավելվածով սահմանված Կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի բլանկների և նույնականացման պլաստիկ քարտերի հաջորդ մատակարարումների ընդհանուր քանակից:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել պայմանագրին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ (բայց ոչ ուշ թերությունները հայտնաբերելուց հետո 20 աշխատանքային օրվա ընթացքում) գրավոր հայտնել Կապալառուին,

2.2.2 Աշխատանքի փուլային արդյունքը, մատակարարված ապրանքը ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը, բացառությամբ սույն պայմանագրի 4.1.2 կետով նախատեսված դեպքի:

2.2.3 ձեռնարկել համապատասխան միջոցառումներ, որոնք նպատակ ունեն աջակցելու էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման էլեկտրոնային քարտերի տարածմանը

հանրությանն իրազեկման հնարավոր եղանակների կիրառմամբ՝ ապահովելով նույնականացման, վավերացման և էլ-ստորագրությամբ փոխանցումներ կատարելու հնարավորությունը:

2.3 Կապալառուն իրավունք ունի՝

2.3.1 Մինչև Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու մատուցված Աշխատանքի համարժեք գինը, բացառությամբ երբ պայամանգիրը լուծվել է Կապալառուի կողմից Աշխատանքները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու պատճառով: Պատվիրատուն պարտավոր է նաև հատուցել պայմանագրի դադարմամբ Կապալառուին պատճառված վնասները՝ ամբողջ Աշխատանքի համար սահմանված և կատարված Աշխատանքի համար վճարված մասի գների տարբերության մեջ Կապալառուի մրցույթի առաջարկի գնահաշվարկի մեջ հաշվարկված շահույթի չափով:

2.3.2 Մինչև Աշխատանքի փուլային կամ վերջնական արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները, ներառյալ գնման առարկան երրորդ անձից ձեռք բերման գների տարբերությունը,

2.3.3 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը,

2.3.4 Պատվիրատուի նախնական համաձայնությամբ Աշխատանքների որոշակի մասն իրականացնել ենթակապալառուի միջոցով: Ենթակապալառուի կողմից կատարված աշխատանքների համար պատասխանատու է Կապալառուն:

2.4 Կապալառուն պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի պայմաններով ապահովել Աշխատանքի մատուցումը՝ պայմանագրի իր մեղքով լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները, ներառյալ գնման առարկան երրորդ անձից ձեռք բերման գների տարբերությունը,

2.4.2 Սույն պայմանագրի 2.1.5 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը,

2.4.3 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը,

2.4.4 Եթե իրականացվող աշխատանքների երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար վճարում է տույժ՝ հայտնաբերված թերության վերացման համար իրականացվող փաստացի ծախսերի չափով,

2.4.5. իրականացնել վերապատրաստում՝ կիրառելով վերապատրաստման համապատասխան մեթոդներ, մասնավորապես, բայց և չսահմանափակվելով հրահանգիչների պրեզենտացիաներով, ինտենսիվ լսարանային դասընթացներ օգտագործողի ձեռնարկների և այլ տեխնիկական փաստաթղթերի տրամադրմամբ, ճեպազրույցներ, կողմնորոշման և աշխատանքային հանդիպումներ, ուսումնական տուրեր և այլ վերապատրաստման հնարավորություններ՝ համաձայն հավելված N 1-ի

2.4.6. Ապահովել աշխատանքի կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը: Չհրապարակել համակարգի և դրա գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկություն, առանց Պատվիրատուի համաձայնության:

2.4.7. Սույն պայմանգարի 1.2.1 կետով նախատեսված համակարգի ներդրումն իրականացնել և համակարգը շահագործման հանձնել պայմանագրի կնքումից հետո 180 օրվա ընքացքում:

2.4.8. սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված Կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի բլանկների և նույնականացման պլաստիկ քարտերի յուրաքանչյուր օրացույցային տարվա չափաքանակը ՀՀ տարածք ներմուծել մինչև այդ տարվան նախորդող օրացույցային տարվա դեկտեմբերի 1-ը, բացառությամբ առաջին տարվա համար նախատեսված Կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի բլանկների և նույնականացման պլաստիկ քարտերի ներմուծմանը, որը պետք է տեղի ունենա Պայմանագրի 2.4.7 կետում սահմանված համակարգի ներդրման և շահագործման հանձնելու հետ միաժամանակ:

3. ԱԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կապալառուն սույն պայմանագրի 1.2.1, 1.2.3-ից 1.2.6 կետերով սահմանված աշխատանքներից (ներառյալ մատակարարումից) յուրաքանչյուրի կատարման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում կատարված յուրաքանչյուր աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

3.2 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից քառասուն օրացույցային օրվա ընթացքում, իսկ պայմանագրի 1.2.4 կետով սահմանված մատակարարման դեպքում՝ քսան օրացույցային օրվա ընթացքում, Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքնը չընդունելու պատճառաբանված մերժումը: Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում սույն կետով սահմանված Պատվիրատուի կողմից հանձման-ընդունման արձանագրության ստորագրման համար նախատեսված ժամկետի հաշվարկը կասեցվում է և կասեցման պատճառների վերացման դեպքում սկսվում է հաշվարկվել սկզբից:

3.3 Կապալառուի մատուցած յուրաքանչյուր աշխատանքի արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում պայմանագրի 3.1 կետով սահմանված երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կապալառուի կողմից մատուցման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 16 901 760 (տասնվեց միլիոն ինը հարյուր մեկ հազար յոթ հարյուր վաթսուն) Եվրո, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում Կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի բլանկների և նույնականացման պլաստիկ քարտերի, ինչպես նաև Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ նյութերի և սարքավորումների արժեքը, այդ ամենի փոխադրման, ՀՀ տարածք ներմուծման, մաքսազերծման գումարները, բոլոր հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները: Եթե պայմանագրի գործողության ընթացքում ի հայտ կգան այլ ծախսեր, ապա դրանք ևս ներառված են համարվում սույն կետով սահմանված գնի մեջ և չեն կարող այն փոփոխել, բացառությամբ սույն պայմանագրի 7.4 , 7.5, 7.6 կետերի:

Գնի ցանկացած փոփոխություն իրականացվում է միայն կողմերի գրավոր համաձայնությամբ:

4.1.1 Սույն պայմանագրով սահմանված Աշխատանքի դիմաց վճարումը սկսում է կատարել Պայմանագրի 1.2.1 կետին համապատասխան Կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի համակարգի ներդրման գործընթացն ավարտելուց և այն շահագործման հանձնելուց հետո միայն Կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի բլանկների և նույնականացման պլաստիկ քարտերի տվյալ տարվա համար նախատեսված չափաքանակի իրացումից (համաձայն հավելված N 2-ի) փաստացի գոյացած ֆինանսական միջոցներից՝ յուրաքանչյուր կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրի համար 37.44 Եվրո, իսկ նույնականացման քարտի համար 5.52 Եվրո գումար՝ ըստ սույն պայմանագրին կից հավելված N 2-ով սահմանված ժամանակացույցի: Պատվիրատուն օրացույցային եռամսյակը մեկ Կապալառուին տրամադրում է տեղեկատվություն համապատասխանաբար նախորդ օրացույցային եռամսյակում անհատականացված (իրացված) կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրի և/կամ նույնականացման պլաստիկ քարտերի վերաբերյալ:

4.1.2 Եթե Պատվիրատուն չի ապահովել պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածով սահմանված Կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի բլանկների և նույնականացման քարտերի տվյալ օրացույցային տարվա համար նախատեսված չափաքանակի իրացումը, ապա այն կարող է լրացվել հաջորդ տարում: Ընդ որում հաջորդ տարվա ընթացքում պատվիրատուն պարտավոր է լրացնել նախորդ տարվա համար սահմանված, սակայն չանհատականացված (չիրացված) Կենսաչափական կողմնորոշիչներ

պարունակող էլեկտրոնային անձնագրերի բլանկների և նույնականացման պլաստիկ քարտերի նախատեսված չափաքանակի տարբերությունը և տվյալ տարվա համար նախատեսված չափաքանակի իրացումը: Այս դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված չափաքանակների չիրացումը կետանց չի համարվում և դրա համար տուգանք չի վճարում: Իրար հաջորդող երկու տարվա ընթացքում Պատվիրատուի կողմից էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի տվյալ տարվա համար նախատեսված չափաքանակի իրացումը չապահովելու դեպքում նա պարտավոր է հատուցել Պայմանագրի հավելված 2-ով սահմանված չափաքանակային համապատասխան պատվիրված (ընդունված) և իրացված քարտերի արժեքի տարբերությունը Կապալառուին:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Աշխատանքի դիմաց վճարում է դրամական միջոցները՝ Եվրոյով, Կապալառուի բանկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի 4.1.1.կետին համաձայն և Կապալառուի կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրի հիման վրա՝ մինչև յուրաքանչյուր օրացույցային եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը:

4.3 Էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի իրացման (անհատականացման) ժամանակ առաջացած խոտանի հետ կապված հարցերի ֆինանսական կարգավորումն իրականացվում է տարին մեկ անգամ կողմերի միջև կնքված արձանագրության հիման վրա: Կապալառուի մեղքով առաջացած էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի խոտանի հետ կապված ծախսերը ծածկում է Կապալառուն, իսկ բացարձակապես սխալ անհատականացման պատճառով առաջացած խոտանի հետ կապված ծախսերը՝ Պատվիրատուն:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրով և դրա հավելվածներով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման, 2.1.5 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքները չընդունվելու յուրաքանչյուր դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 %-ի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 %-ի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացույցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել Աշխատանքը մատուցելու արդյունքում Կապալառուին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 2.2.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև գնման պայմանագրի կնքումը Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կապալառուին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև գնման պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի հատուցման ռիսկը, իսկ Կապալառուն պարտավոր է

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.2 Սույն պայմանագրի կատարումը ապահովված է պայմանագրի 4.1 կետով սահմանված գնի տաս տոկոսի չափով մինչ սույն պայմանագրի կնքումը Պատվիրատուին ներկայացված բանկային երաշխիքով/ կանխիկ գումարի ապահովմամբ: : (Նշվում է ըստ տրամադրվածի):

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Պայմանագրի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել, եթե սույն պայմանագրի 1.4 կետով սահմանված պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց առնվազն վեց ամիս առաջ կողմերից որևէ մեկը գրավոր չի տեղեկացրել մյուս կողմին պայմանագրի դադարեցման մասին՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.4 Եթե պայմանագրի գնի հիմնավորվածության և արժանահավատության փորձաքննության արդյունքում պայմանագրի գինը որակվում է շուկայական գնից տասը տոկոս բարձր, և պայմանագրի կողմը չի համաձայնում գերազանցող մասով գնի նվազեցմանը, ապա Պատվիրատուն պայմանագիրը միակողմանիորեն լուծում է և չի կրում պայմանագրի լուծման հետևանքով առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը:

7.5 Բոլոր հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները պետք է վճարվեն կատարման պահին գործող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմված չափով: Սակայն պայմանագրի կնքման պահից հետո դրանց դրույքաչափերի հետագա ավելացման դեպքում ավելացված մասի վճարումը փոխհատուցում է Պատվիրատուն, իսկ նվազման դեպքում՝ նվազված մասին համապատասխան իջեցվում է պայմանագրի գինը:

7.6 Պատվիրատուն ցանկացած պահի իրավունք ունի կատարել պայմանագրի գնի վերահաշվարկ՝ տվյալ տարվա համար բլանկների և/կամ քարտերի ստացած քանակի համար, անկախ իրացման (անհատականացման) ծավալից, նախքան վճարման սահմանված ժամկետի վրա հասնելը երրորդ անձից ներգրաված փոխառու միջոցների հաշվին միանվագ վճարելու դեպքում՝ որպես միակողմանի փոփոխված գին վճարելով հետևյալ չափերով՝

1. անձնագրի ստացված 1 բլանկի համար վերահաշվարկված գինը հավասար է ՝ 13665.6/(0.04n+365) եվրո, որտեղ n-ը վճարում կատարելու օրվան հաջորդող օրվանից մինչև հավելված 2-ում նշված տարեթվին հաջորդող տարվա հունվարի 20-ը ներառյալ ընկած ժամանակահատվածի օրացույցային օրերի քանակն է: Ընդ որում, սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված դեպքում գնի ավելացման կամ իջեցման դեպքում 13665.6 թվի փոխարեն կիրառվում է համապատասխանաբար (37.44 + կամ – Y) x 365 մեծությունը, որտեղ Y-ը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող հարկերի, տուրքերի, պարտադիր այլ

վճարների դրույքաչափերի ավելացման կամ նվազեցման արդյունքում հավելված 2-ի 1 միավորի գնին ավելացվող կամ գնից նվազեցվող թիվն է:

2. ստացված նույնականացման 1 պլաստիկ քարտի համար վերահաշվարկված գինը հավասար է՝ 2014.8/ (0.04n+365) եվրո, որտեղ n-ը վճարում կատարելու օրվան հաջորդող օրվանից մինչև հավելված 2-ում նշված տարեթվին հաջորդող տարվա հունվարի 20-ը ներառյալ ընկած ժամանակահատվածի օրացույցային օրերի քանակն է: Ընդ որում, սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված հիմքով գնի ավելացման կամ իջեցման դեպքում 2014.8 թվի փոխարեն կիրառվում է համապատասխանաբար (5.52 + կամ –Y) x 365 մեծությունը, որտեղ Y-ը ՀՀ տարածքում գործող հարկերի, տուրքերի պարտադիր այլ վճարների դրուքաչափերի ավելացման կամ նվազեցման արդյունքում հավելված 2-ի 1 միավորի գնին ավելացվող կամ գնից նվազեցվող թիվն է:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով: Ընդ որում վեճի լուծումը ենթակա է ՀՀ դատարաններին:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է հայերենով և անգլերենով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և նույնականեն, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Հայերեն և անգլերեն տարբերակների միջև հակասություն առաջանալու դեպքում գերակայում է հայերեն տարբերակը: Սույն պայմանագրի N1, N2, N3, հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը: Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

7.9 Սույն պայմանագրի կատարման ապահովումը վերադարձվում է Կապալառուին սույն պայմանագրով կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով (այդ թվում՝ երաշխիքային ժամկետը) կատարման օրվանից հաշված 5 աշխատանքային օր հետո:

7.10 Պատվիրատուի և Կապալառուի միջև աշխատանքի թերությունների կամ դրանց պատճառների հետ կապված վեճ առաջանալու դեպքում ցանկացած կողմի պահանջով նշանակվում է փորձաքննություն: Փորձաքննության ծախսերը կրում է Կապալառուն, բացառությամբ այն դեպքերի, երբ փորձաքննությամբ հաստատվում է Կապալառուի գործողությունների և հայտնաբերված թերությունների միջև պատճառահետևանքային կապի բացակայությունը: Նշված դեպքերում փորձաքննության ծախսերը կրում է փորձաքննություն պահանջած կողմը, իսկ եթե փորձաքննությունը նշանակվել է երկու կողմերի համաձայնությամբ, ապա ծախսերը նրանց միջև բաշխվում են հավասարաչափ:

7.11 Սույն պայմանագրով նախատեսված՝ իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Պատվիրատուի անունից իրականացնում է “Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ” ՓԲԸ:

8. Ռիսկեր

8.1. Կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի բլանկների և նույնականացման պլաստիկ քարտերի պատահական կորստի կամ պատահական վնասվածքի ռիսկը Պատվիրատուին է անցնում հանձման-ընդունման ակտի հիման վրա Պատվիրատուի կողմից այն ընդունվելուց հետո:

8.2 Նյութերի, սարքավորումների, հանձնված գույքի կամ սույն պայմանագրի կատարման համար օգտագործվող այլ գույքի պատահական կորստի կամ վնասվածքի ռիսկը կրում է դրանք տիրապետող կողմը:

8.3 Աշխատանքի արդյունքի պատահական կորստի կամ վնասվածքի ռիսկը՝ մինչև Պատվիրատուի կողմից այն ընդունելը կրում է Կապալառուն:

9 ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	*ԿԱՊԱԼԱՌՈՒ*
«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ,	«ՊՎՊՎ» ԲԸ ԼՀ, Վարշավա, Սան-Գուզսկի փող., 00-222
ՀՀ, ք. Երևան, Կառավարության տուն 1,	ՀՀ _____
Հ/Հ 15700 04596000100	ընկերության տնօրենների խորհրդի նախագահ Կ. Զարնոտալ
«Ամերիաբանկ» ՓԲԸ	
տնօրեն Ա. Ղույլան	
---	---
¥ստորագրություն¤	¥ստորագրություն¤
Կ.Տ	Կ.Տ

Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր
Հայաստանի Հանրապետության ոստիկանություն,
ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 130,
Հ/Հ 900011159044
Անձնագրային և վիզաների
վարչության պետ Ն.Մուրադխանյան

(ստորագրություն)
Կ.Տ.